

**«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ**

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012թ.



ԵՐԵՎԱՆ 2013

Բ ո վ ա ն դ ա կ ո թ յ ո ն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին	5
Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին	6
Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին	7
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	9
Տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	
1. Իրավական դաշտ	10
2. Հաշվապահական ստանդարտներ	10
3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	20
4. Տոկոսային և նմանատիպ ծախսեր	20
5. Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	20
6. Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	20
7. Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	21
8. Այլ գործառնական եկամուտներ	21
9. Վարկերի և այլ փոխառություններից առաջացած կորուստներ /հաշվետու	21
10. Ընդհանուր վարչական ծախսեր	22
11. Այլ գործառնական ծախսեր	22
12. Շահութահարկի գծով ծախս	22
13. Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	23
14. Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	23
15. Բանկերում տեղաբաշխված միջոցներ	23
16. Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	23
17. Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	24
18. Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	24
19. Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	24
20. Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	24
21. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	25
22. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	25
23. Ստացվելիք տոկոսներ	26
24. Այլ ակտիվներ	27
25. Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	27
26. Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	27
27. Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	27
28. Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	28
29. Վճարվելիք գումարներ	28
30. Այլ պարտավորություններ	28
31. Կանոնադրական կապիտալ	28
32. Վերագնահատման պահուստներ	29
33. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն	30
34. Արտարժույթային զամբյուղ	34
35. Տոկոսադրույքի ռիսկ	34
36. Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ	25
37. Ակտիվների, պարտավորությունների և արտհաշվեկշռային հոդվածների	25
38. Գրավադրված ակտիվներ	36
39. Կապակցված կողմերի կենտրոնացում	36

Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

_____ Փ. Գևորգյան

Առդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱԾ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ

Մենք իրականացրել ենք «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առդիտը, որոնք ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Մույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՄՄ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:



Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացության համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գառնի Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշգրիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄ):

Աուդիտոր

Մ.Սկրտչյան _____



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՄԻՆ
31 դեկտեմբերի 2012թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթ	2012թ. (ստուգված)	2011թ. (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	386,110	394,073
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(138,331)	(129,626)
ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ		247,779	264,447
Շահաբաժնի տեսքով եկամուտներ		-	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		-	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(2,034)	(1,295)
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	5	4,482	
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	6	7,626	418
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ (վնաս)			
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս)	7	(8,712)	6,720
Այլ գործառնական եկամուտներ	8	96,224	42,154
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ		345,365	312,444
Վարկերից և այլ փոխառվածքայիններից առաջացած կորուստներ	9	(281,473)	(153,599)
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(68,861)	(72,471)
Այլ գործառնական ծախսեր	11	(21,838)	(12,741)
ՇԱՀՈՒՔԱԿԱՆ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ		(26,807)	73,633
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	12	62	(15,291)
ՇԱՀՈՒՔԱԿԱՆ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ		(26,745)	58,342
Այդ թվում` Մայր կազմակերպության բաժնեմաս			
Չվերահսկվող բաժնեմաս			
ԱՅԼ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ			
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատումներ		(94)	(2,489)
Դրամական հոսքերի հեջավորում		-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերազնահատումներից օգուտներ		55	112
ԱՅԼ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ		(39)	(2,377)
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ		-	-
ԱՅԼ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ		(39)	(2,377)
ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		(26,784)	55,965
Այդ թվում`			
Մայր կազմակերպության բաժնեմաս			
Չվերահսկվող բաժնեմաս			
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ			
Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ			

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ`

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ`

ԱՆԱՀԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը` 01.03.2013թ.



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2012թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ծան.	2012թ. (ստուգված)	2011թ. (ստուգված)
1.	Ակտիվներ			
1.1	Գրամական միջոցներ և բանկային հաշիվներ	13	76,840	12,590
1.2	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	14	3,195	-
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	15	-	-
1.4	Գրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	16	1,292	8,484
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	17	1,557,177	1,353,301
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	18	486,398	390,176
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	19	-	-
1.8	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20	-	-
1.9	Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	21	12,055	9,800
1.10	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		-	-
1.11	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		-	-
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	119,317	124,731
1.13	Ստացվելիք տոկոսներ	23		27,822
1.14	Այլ ակտիվներ	24	142,106	236,404
Ընդամենը՝ ԱԿՏԻՎՆԵՐ			2,398,380	2,163,308
2.	Պարտավորություններ			
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	25	399,463	326,863
2.2	Գրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	26	-	-
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	27	1,311,056	1,163,225
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		-	-
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		-	-
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	28	-	-
2.7	Պահուստներ		1,500	-
2.8	Վճարվելիք գումարներ	29	2,222	3
2.9	Վճարվելիք տոկոսներ			35,545
2.10	Այլ պարտավորություններ	30	4,559	9,764
Ընդամենը՝ պարտավորություններ			1,718,800	1,535,400
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	31	655,000	530,000
3.2	Էմիսիոն եկամուտ		-	-
3.3	Պահուստներ՝		51,325	48,913
3.3.1	Գլխավոր պահուստ		39,311	36,860
3.3.2	Վերագնահատման պահուստներ	32	12,014	12,053
3.4	Կուտակված շահույթ (վնաս)		(26,745)	48,995
Ընդամենը՝ ԿԱՊԻՏԱԼ			679,580	627,908
Ընդամենը՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԿԱՊԻՏԱԼ			2,398,380	2,163,308

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

ԱՆԱՀԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 01.03.2013թ.

]

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պակաս	Վերականգնողական ֆոնդերի և արժեքային պահուստների փոփոխությունները	Վերականգնողական ֆոնդերի և արժեքային պահուստների փոփոխությունները	Մյուս փոփոխություններ	Ներքին շարժեր	Ներքին շարժեր	Ընդամենը	Ընդամենը	
	Կանոնադրական կապիտալի հիմնական	Հետ օգնություն	Զուտ գումար										
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)													
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2011թ. (ստուգված)	277,200	-	277,200	-	27,490	-	13,982	-	448	187,399	506,519	506,519	
1.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը											-	-	
2. Վերահաշվարկված մնացորդը	277,200	-	277,200	-	27,490	-	13,982	-	448	187,399	506,519	506,519	
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) օձույ, այդ թվում՝	252,800	-	252,800	-	-	-	-	-	-	-	252,800	252,800	
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	252,800		252,800								252,800	252,800	
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ օգնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փախերի) հաշվին											-	-	
4. Համապարփակ եկամուտ							(2,489)		112	58,342	55,965	55,965	
5. Շահութաբաժիններ										(187,376)	(187,376)	(187,376)	
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝										-	-	-	
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-	-	
7. Ներքին շարժեր, այդ թվում՝					9,370					(9,370)			
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					9,370					(9,370)			
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում											-	-	
7.3. Էմիսիոն վնասի ծածկում											-	-	
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում											-	-	
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր											-	-	



8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2011թ. (ստուգված)	530,000	-	530,000	-	36,860	-	11,493	-	560	48,995	627,908	-	627,908
---	---------	---	---------	---	--------	---	--------	---	-----	--------	---------	---	---------

Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)													
1. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2012թ. (ստուգված)	530,000	-	530,000	-	36,860	-	11,493	-	560	48,995	627,908	-	627,908
1.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը												-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	530,000	-	530,000	-	36,860	-	11,493	-	560	48,995	627,908	-	627,908
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնենասերի) գծով, այդ թվում՝	125,000	-	125,000	-	-	-	-	-	-	-	125,000	-	125,000
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	125,000		125,000								125,000		125,000
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնենասերի, փայերի) հաշվին												-	-
4. Համապարփակ եկամուտ							(94)		55	(26,745)	(26,784)		(26,784)
5. Ըահութարաժիններ										(46,544)	(46,544)		(46,544)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝												-	-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում												-	-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	2,451	-	-	-	-	(2,451)	-	-	-
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					2,451					(2,451)		-	-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում												-	-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում												-	-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում												-	-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր												-	-
8. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 դեկտեմբերի 2012թ. (ստուգված)	655,000	-	655,000	-	39,311	-	11,399	-	615	(26,745)	679,580	-	679,580

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱԾՎԱԳԱՀ՝

ԱՆԱՀԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 01.03.2013թ.



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2012թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		2011թ. (ստուգված)	2012թ. (ստուգված)
1. Դրամական միջոցների գուտ հոսքեր գործառնական գործունեությունից		108,001	(88,323)
<i>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</i>		136,094	218,836
1	Ստացված տոկոսներ	387,275	371,115
2	Վճարված տոկոսներ	(94,871)	(97,868)
3	Կորուստների վերականգնում	-	-
4	Ստացված շահաբաժիններ	-	-
5	Ստացված գուտ կոմիսիոն գումարներ	17,265	22,855
6	Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(42,076)	(36,479)
7	Վճարված հարկեր	(131,499)	(40,787)
<i>Դրամական միջոցների գուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</i>		(28,093)	(307,159)
8	Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(57,364)	(351,310)
9	Ներգրավված միջոցների ավելացում(նվազում)	57,757	101,965
10	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի արժեքների նվազում (ավելացում)	(31,543)	(45,159)
11	Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում)	-	-
12	Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	3,057	(12,655)
2. Դրամական միջոցների գուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		(117,670)	100,632
13	Մինչև մարման ժամկետը պահվող արժեքների նվազում (ավելացում)	(10,000)	-
14	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)	-	-
15	Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(24,083)	-
16	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(83,587)	(6,089)
17	Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	-	-
18	Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	-	106,721
3. Դրամական միջոցների գուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		10,315	52,590
19	Վճարված շահաբաժիններ	(31,357)	(20,466)
20	Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	41,672	57,606
21	Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	-	-
22	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեքների ավելացում (նվազում)	-	-
23	Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	-	15,450
24	Ֆինանսական վարձակալության դիմաց վճարվելիք գումարների ավելացում (նվազում)	-	-
25	Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	-	-
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա			
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ անձ(նվազում)		646	64,899
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		12,071	12,717
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		12,717	77,616

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
Գ.ԼԻԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝
Հաշվետվության վավերացման ամսաթիվը՝ 01.03.2013թ.

ԲԱԳՐԱՏ ԱՍՏՈՐՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



**ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1 Իրավական դաշտ

Հիմնական գործունեությունը

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Վարկային կազմակերպություն) հիմնադրվել է 2006թ. որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Վարկային կազմակերպությունը գրանցվել է 10.10.2006թ. ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ ՀՀ ԿԲ) կողմից թիվ 16 արտոնագրային համարով:

Վարկային կազմակերպության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Վարկային կազմակերպության իրավաբանական և գործունեության հասցեն է. ՀՀ ք. Երևան, Թումանյան 32, բն.17:

Վարկային կազմակերպության հայտարարված կապիտալը բաղկացած է 52,000 հատ սովորական բաժնետոմսերից, որոնց անվանական արժեքը 10,000 ՀՀ դրամ է և 13,500 հատ արտոնյալ բաժնետոմսերից, որոնց անվանական արժեքը 10,000 ՀՀ դրամ է: Հայտարարված կանոնադրական կապիտալը ամբողջովին համալրված է:

Վարկային կազմակերպության աշխատողների ընդհանուր թվաքանակը 13-ն է, որից 2-ը սպասարկող անձնակազմ:

2 Հաշվապահական ստանդարտներ

Հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն Վարկային կազմակերպության գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա. Վարկային կազմակերպության ակտիվները կիրացվեն և պարտավորությունները կմարվեն կազմակերպության բնականոն գործունեության ընթացքում:

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը դա այն տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունն իրականացնում է գործունեություն: Վարկային կազմակերպության ֆունկցիոնալ արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և վարկային կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը:

ՀՀ դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:



Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Վարկային կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Վարկային կազմակերպությունից, և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկային կազմակերպության կողմից ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով յուրաքանչյուր օր, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից: Հաշվեգրվող գումարների չափի հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Չաշխատող վարկերի և այլ ակտիվների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Նման տոկոսային եկամուտները ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են դրամարկղային մեթոդի համաձայն:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, մասնավորապես՝ աուդիտորական, գովազդային, շենքի պահպանման, տեխնիկական սպասարկման պարտավորությունները, ինչպես նաև փոխադրամիջոցների օգտագործած վառելիքի ծախսային պարտավորությունները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են հաշվեգրման սկզբունքով՝ ծառայությունների մատուցման ընթացքում կամ հիմք ընդունելով համապատասխան պայմանագրային պայմանները:

Շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ դրանց հայտարարման պահին:

Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ֆունկցիոնալ արժույթով՝ ՀՀ դրամով, կիրառելով գործարքի օրվա ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված և Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են յուրաքանչյուր օր՝ կիրառելով տվյալ ամսաթվի ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված և Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքը:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս:



Հարկային հաշվառում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան հաշվի առնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն եկամուտներից չնվազեցվող ծախսերը:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Վարկային կազմակերպությունն ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Վարկային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում վճարում է նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Վարկային կազմակերպության դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են ՀՀ բանկերում հաշիվներից:

Վարկային կազմակերպության դրամական միջոցների փաստացի ներհոսքի և կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով պատշաճորեն ձևակերպված փաստաթղթերի հիման վրա:

Վարկային կազմակերպությունը գործառնական գործունեության արդյունքում ստացած համախառն դրամական մուտքերի և վճարումների հիման վրա դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմելիս առաջնորդվում է ուղղակի մեթոդով:

Ֆինանսական գործիքներ

Վարկային կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Վարկային կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Վարկային կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռք բերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:



Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ՝ ակտիվներ, որոնք ձեռք են բերվել հիմնականում գների կարճաժամկետ տատանման արդյունքում եկամուտ ստանալու նպատակով: Ակտիվը դասակարգվում է որպես Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվ, եթե այն, անկախ դրա ձեռք բերման պատճառից, այնպիսի պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում եկամուտ ստանալու փաստացի ուղիների վերաբերյալ:

Առևտրական նպատակներով պահվող արժեթղթերը սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Համապատասխան իրացված և չիրացված բոլոր օգուտներն ու վնասները գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից ստացված եկամուտներ հողվածում:

Վաճառքի համար մատչելի ներդրումներ՝ այն ներդրումներն են, որոնք Վարկային կազմակերպությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում (չիրացված շահույթ կամ վնաս), բացառությամբ արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով ակտիվի արժեքի աճի կամ նվազեցման, ինչպես նաև արժեգրկման հետևանքով ակտիվի արժեքի նվազման և արժեգրկման հակադարձումից ակտիվի արժեքի աճի, որոնց դեպքում կապիտալում ճանաչված չիրացված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարման ժամանակ կապիտալում ճանաչված չիրացված շահույթը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես իրական շահույթ կամ վնաս:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տոկոսները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց գնանշված շուկայական գների վրա առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր՝ ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Վարկային կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեգրկումից պահուստների գումարներով:

Հաճախորդների տարբեր խմբերին վարկերի տրամադրումը, վարկերի և տոկոսների մարման գործընթացը, ինչպես նաև ակտիվների արժեգրկման (այդ թվում՝ նաև ներելը կամ զիջելը) գործառնությունները իրականացվում են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի, ինչպես նաև համաձայն Վարկային կազմակերպության Խորհրդի կողմից հաստատված կարգերի, կանոնակարգերի, Խորհրդի որոշումների և Գործադիր տնօրենի կարգադրությունների դրույթների:



Վարկային կազմակերպության համապատասխան ստորաբաժանումների կողմից վարկերի և դեբիտորական պարտքերի (ակտիվների) դասակարգումը, հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրս գրումը կատարվում են ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման մասին» կարգի հիման վրա Վարկային կազմակերպության Խորհրդի կողմից ընդունված ներքին կանոնակարգի պահանջներին համապատասխան, պարբերականությամբ և ժամկետներում:

Վարկերի (այդ թվում նաև փոխառություններ, ֆակտորինգ և այլն) և դեբիտորական պարտքերի գծով պայմանագրերի սպասարկման ընթացքում առաջացող տույժերը ենթակա են հաշվեկշռում պարտադիր հաշվառման:

Հաշվեկշռից ակտիվները ետհաշվեկշիռ դուրս գրելուց հետո շարունակվում է տոկոսների և (կամ) տուժանքների հաշվեկշռում օրենսդրությամբ և պայմանագրերով սահմանված ժամկետներում և կարգով, ինչպես նաև Վարկային կազմակերպության կողմից սահմանված այլ կարգերով ու կանոնակարգերով նախատեսված պայմաններով:

Հաշվեկշռից ակտիվները ետհաշվեկշիռ դուրս գրելուց հետո դրանք ենթակա են հաշվառման մինչև 5 տարի ժամանակով: Նշված ժամանակաշրջանի ընթացքում չմարված ակտիվները ենթակա են ետհաշվեկշռից դուրս գրման:

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր՝ Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Վարկային կազմակերպությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Վարկային կազմակերպության կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող էական գումարի ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, վերադասակարգվելով որպես «Հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերից, ֆինանսական կազմակերպություններից «Հետգնման պայմանագրերով («ռեպո») ստացված փոխառություններ» հոդվածում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ բանկերի նկատմամբ կամ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեկշռվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ֆինանսական



շուկայում ձևավորված և Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներառյալ հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրսգրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Վարկային կազմակերպության ներքին ակտերով:

Հիմնական միջոցների միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ գույք և գրասենյակային սարքավորումներ, կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, փոխադրամիջոցներ և այլն) իրականացվում է ելնելով տվյալ միավորի օգտագործման ժամկետից, նշանակությունից և նպատակից:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները և մաշվածության համապատասխան տարեկան տոկոսադրույքները հետևյալն են.

Օգտակար ծառայության ժամկետ	(տարիներ) Տարեկան տոկոսադրույք
Շենքեր	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5
Կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա	3
Փոխադրամիջոցներ	5
Այլ հիմնական միջոցներ	5
Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցներ	1

Հողատարածքի համար մաշվածություն չի հաշվարկվում:

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ:

Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:



Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, եթե հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Վարկային կազմակերպության հիմնական միջոցների վերագնահատումը կատարվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ:

Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ ուղղակիորեն սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում:

Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

Վարձակալություն

Վարկային կազմակերպությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կարող է վարձակալել հող, շենք և տարածքներ, այլ հիմնական միջոցներ, ինչպես նաև դրանց գծով կատարել կապիտալ ներդրումներ:

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատրի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված ոչ նյութական ակտիվները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայում ձևավորված և Կենտրոնական Բանկի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Ոչ նյութական ակտիվի միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ համակարգչային ծրագրեր, լիցենզիաներ և վստահագրեր, հեղինակային իրավունքներ և այլն) իրականացվում է՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման նշանակությունից և նպատակից: Համակարգչային ծրագրերի օգտակար ծառայության ժամկետը գնահատվում է 3 տարի է :



Ոչ նյութական ակտիվի վրա կատարված հետագա ծախսումները հաշվառվում են որպես կապիտալ ներդրումներ և ավելացվում են տվյալ ակտիվի արժեքին:

Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի մաշվածության ժամկետը որոշվում է՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվները համարվում են անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվ, և այդ ակտիվի համար ամորտիզացիա չի հաշվարկվում, սակայն կատարվում է այդ ակտիվի գնահատում արժեզրկման առումով:

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Վարկային կազմակերպությունը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Ոչ նյութական ակտիվների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են Վարկային կազմակերպության Խորհրդի որոշման հիման վրա:

Բաժնետիրական կապիտալ

Վարկային կազմակերպության սովորական և արտոնյալ բաժնետոմսերը ներառված են սեփական (ընդհանուր) կապիտալում:

